**«ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ» ՓԲԸ-Ի ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՊԱՐԿԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**N *ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-21/55***

ք. Երևան «13» հոկտեմբերի 2021թ.

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Ա. Գրիգորյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Էլիտ-Էսվէ>> ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Ս.Մկրտչյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի ավտոմոբիլային պարկի ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայության մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով` նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված` ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է առավելագույնը՝

1-ին չափաբաժնի համար 450 000 /չորս հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ
2-րդ չափաբաժնի համար 250 000 /երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ
3-րդ չափաբաժնի համար 250 000 /երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ
4-րդ չափաբաժնի համար 200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ
5-րդ չափաբաժնի համար 450 000 / չորս հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ
6-րդ չափաբաժնի համար 200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում:

**Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝**

**ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.**

**ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.**

1-ին չափաբաժնի համար 2 148 000 ՀՀ դրամ
2-րդ չափաբաժնի համար 1 848 000 ՀՀ դրամ
3-րդ չափաբաժնի համար 2 648 000 ՀՀ դրամ
4-րդ չափաբաժնի համար 2 748 000 ՀՀ դրամ
5-րդ չափաբաժնի համար 648 000 ՀՀ դրամ
6-րդ չափաբաժնի համար 3 248 000 ՀՀ դրամ

**ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.**

1-ին չափաբաժնի համար 2 782 800 ՀՀ դրամ
2-րդ չափաբաժնի համար 2 382 900 ՀՀ դրամ
3-րդ չափաբաժնի համար 3 484 000 ՀՀ դրամ
4-րդ չափաբաժնի համար 3 559 300 ՀՀ դրամ
5-րդ չափաբաժնի համար 826 000 ՀՀ դրամ
6-րդ չափաբաժնի համար 4 249 800 ՀՀ դրամ

**Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.**
**Ք-ն մատուցված ծառայության քանակն է:**

## 2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից

ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված

հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն ՓԲԸ | Էլիտ Էավե ՍՊԸ |
| ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 | ք.Երևան, Ա.Ահարոնյան 22փ. բն30 |
| Արդշինբանկ ՓԲԸ, Շենգավիթ մ/ճ | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 2473600002170010 | Հ/Հ 1570030407870200 |
| ՀՎՀՀ 02205028 | ՀՎՀՀ 00465342 |
| գլխավոր տնօրեն ---------------- Ա. Գրիգորյան | տնօրեն---------------------- Ս. Մկրտչյան |
| /ստորագրություն/ | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ. |

*Հավելված N 1*
*«    »    20  թ. կնքված*
*ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-21/55 ծածկագրով պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | մատուցման | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր առավելագույն գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | Ժամկետը |
| 1 | 50111110 | Պազ 32053- 1հատ (իր մոդիֆիկա-ցիաներով) /մարդատար ավտոբուսի վերանորոգման ծառայություններ/ | դրամ | 450000 | 1 | ք. Երևան, Արցախի փողոց 4-րդ նրբանցք, հ 14 | Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտա-կանություն-ների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օր անց 1 տարվա ժամկետում |
| 2 | 50111110 | Զիլ 431410-1հատ (իր մոդիֆիկացիաներով) /բեռնատար ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ/ | դրամ | 250000 | 1 | | |
| 3 | 50111110 | Զիլ ММЗ 4505-1հատ (իր մոդիֆիկացիաներով) / բեռնատար ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ/ | դրամ | 250000 | 1 | | |
| 4 | 50111110 | Զիլ 431518 - 1հատ (իր մոդիֆիկացիաներով) / բեռնատար ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ/ | դրամ | 200000 | 1 | | |
| 5 | 50111110 | Հունդաի քաունթի-1հատ (իր մոդիֆիկացիաներով) / բեռնատար ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ/ | դրամ | 450000 | 1 | | |
| 6 | 50111110 | Բելառուս Էքսկավատոր-1հատ (իր մոդիֆիկացիաներով) / բեռնատար ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ/ | դրամ | 200000 | 1 | | |

Վերանորոգման ընթացքում օգտագործվող պահեստամասերի և մատուցվող ծառայությունների միավորի առավելագույն գները ներկայացված են հրավերին կից Հավելվածը 1.1-ով / Excel տարբերակով/:

Ծանոթություն.

1.Վերանորոգման ծառայությունները կիրականացվեն համապատասխան «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի ավտոտնտեսության կողմից տրամադրված կարգագրերի հիման վրա:

2.Վերանորոգման ծառայությունները իրականացնելիս պատասխանատու ստորաբաժանման կողմից կարող են տրամադրվել պահեստամասեր:

3. Հիմնական նորոգում անցած ավտոմեքենաներին և ագրեգատներին /շարժիչ, փոխանցման տուփ, կամրջակ և այլն/ պետք է տրվի շահագործման երաշխիքային ժամկետ 20000 կմ կամ 2 տարի, մինչև պայմաններից որևէ մեկի շուտ լրանալը:

4.Նորոգումները պետք է համապատասխանեն նորոգող գործարանների կողմից կազմված նորոգման և տեխսպասարկման ուղեցույցի պահանջներին:

5.Նորոգման ժամանակ փոխարինված ագրեգատները և հանգույցները նորոգող ընկերությունը պարտավոր է հետ վերադարձնել պատասխանատու ստորաբաժանմանը ըստ կարգագրերի:

6.Նորոգումները իրականացվում են ընկերությունների կողմից ներկայացված արատավորման ակտերի հիման վրա՝ «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի ավտոտնտեսության կողմից հաստատվելուց հետո:

7. Նորոգող տեխնիկական սպասարկման/ՏՍ/ կայանը պետք է ունենա ավտոմեքենայի արատաորոշման, ընթացքային մասի, թափքի և շարժիչի վերանորոգման, անիվների մոնտաժման և անվաբացքի կարգավորման, առանձնացված տեղամասեր համապատասխան սարքավորումներով, ամբարձիչներով և դիտափոսով:

8. ՏՍ կայանի տեխնիկական անձնակազմը պետք է համալրված լինեն ավտոմեքենայի արատաորոշման տեխ.սպասարկման և նորոգման աշխատանքների կատարման համար մասնագիտացված աշխատակիցներով այդ թվում շարժիչագործով, ավտոփականագործով, ավտոէլեկտրիկով, անիվների մոնտաժման և անվաբացքի կարգավորման առանձնացված մասնագետներով:

9.Ընկերության կողմից փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն նոր և չօգտագործված:

10. Բեռնատար մեքենաների սպասարկումը պետք է իրականացվի «Երևան ՋԷԿ» ՓԲԸ-ի տարածքում

11. Ավտոմեքենայի անսարքության ժամանակ նրա ինքնագնաց տեղափոխման անհնարինության դեպքում, նրա տեղափոխումը իրականացվում է տեխնիկական սպասարկման կայանի ուժերով: Ընդ որում, Երևանի վարչական տարածքում, տեղափոխումը իրականացվում է անսարքության մասին ծանուցումը / գրավոր կամ բանավոր / ստանալուց հետո 3 ժամվա ընթացքում

12. Քանի որ «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ն հանդիսանում է ՀՀ-ում ստրատեգիական նշանակության օբյեկտ, մեքենաների խափանման ժամանակ նրանց վերանորոգումը պետք է իրականացվի անհապաղ/արտահերթ/:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն ՓԲԸ | Էլիտ Էավե ՍՊԸ |
| ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 | ք.Երևան, Ա.Սիարոնյան 22փ. բն30 |
| Արդշինբանկ ՓԲԸ, Շենգավիթ մ/ճ | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 2473600002170010 | Հ/Հ 1570030407870200 |
| ՀՎՀՀ 02205028 | ՀՎՀՀ 00465342 |
| գլխավոր տնօրեն --------------- Ա. Գրիգորյան | տնօրեն-------------------Ս. Մկրտչյան |
| /ստորագրություն/ | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ. |

| Հ/Հ | Պահեստամասի կամ ծառայության անվանումը | Չափման միվոր | Պազ 32053 | Զիլ 431410 | Զիլ ՄՄՅ 4502 | Զիլ 431518 | Հունդայի քաունթի | Բելառուս էքսկավատոր |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Տրանսպորտային միջոցի քանակը | հատ | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| | Նախահաշվային գին/ ներառյալ ԱԱՀ/ | | 1 800 000 | | | | | |
| | 1.Շարժիչ | | Միավոր գին ներառյալ ԱԱՀ (ՀՀ դրամ) | | | | | |
| 1 | Շարժիչի հանում և տեղադրում | հատ | 30 000 | 0 | 80 000 | 80 000 | | 90 000 |
| 2 | Շարժիչի քանդում արատավորում և հավաքում | հատ | 50 000 | 0 | 80 000 | 80 000 | | 90 000 |
| 3 | Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները | հատ | 25 000 | 0 | 25 000 | 25 000 | | 25 000 |
| 4 | Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով | հատ | 30 000 | 0 | 30 000 | 50 000 | | 50 000 |
| 5 | Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով | հատ | 30 000 | 0 | 50 000 | 50 000 | | 50 000 |
| 6 | Վառոցքի մոմի բնիկի նորոգում | հատ | 5 000 | 0 | 5 000 | 5 000 | | 5 000 |
| 7 | Փականների խցուկների փոխարինում | 1 կ-տ | 5 000 | 0 | 5 000 | 5 000 | | 5 000 |
| 8 | Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում | 1 կ-տ | 30 000 | 0 | 40 000 | 40 000 | | 40 000 |
| 9 | Ծնկաձև լիսեռի հղկում | հատ | 15 000 | 0 | 20 000 | 20 000 | | 20 000 |
| 10 | Մխոցի փոխարինում 1 հատ | հատ | 2 500 | 0 | 2 500 | 2 500 | | 12 500 |
| 11 | Փոկանիվի փոխարինում | հատ | 10 000 | 0 | 20 000 | 20 000 | | 20 000 |
| 12 | Շարժիչի ատամնավոր փոկի փոխարինում | հատ | 5 000 | 0 | 10 000 | 10 000 | | 10 000 |
| 13 | Շարժիչի շղթայի փոխարինում | հատ | 7 000 | 0 | 7 000 | 7 000 | | 7 000 |
| 14 | Շարժիչի յուղի մղիչի նորոգում, մաքրում | հատ | 10 000 | 0 | 10 000 | 10 000 | | 10 000 |
| 15 | Շարժիչի կափարիչի միջադիրի փոխարինում | հատ | 4 000 | 0 | 5 000 | 5 000 | | 5 000 |
| | 2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ | | | | | | | |
| 16 | Յուղի և յուղի զտիչի փոխարինում | հատ | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 | 7 000 | 1 000 |
| 17 | Ավտոմեքենայի յուղում | հատ | 2 000 | 2 000 | 2 000 | 2 000 | 3 000 | 2 000 |
| 18 | Վառոցքի մոմի փոխարինում | 1 կ-տ | 2 000 | 2 000 | 2 000 | 2 000 | | 2 000 |
| 19 | Վառելիքի նուրբ մաքրման զտիչի փոխարինում | հատ | 2 000 | 2 000 | 2 000 | 2 000 | 2 000 | 2 000 |
| 20 | Կարբյուրատորի փոխարինում կամ հանում տեղադրում | հատ | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 | | 5 000 |
| 21 | Կարբյուրատորի վերանորոգում | հատ | 7 000 | 7 000 | 7 000 | 7 000 | | 7 000 |
| 22 | Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում | 1 կ-տ | 10 000 | 10 000 | 10 000 | 10 000 | | 10 000 |
| 23 | Ինժեկտորի բոցամուղերի մաքրում | 1 կ-տ | 30 000 | 30 000 | 30 000 | 30 000 | | 30 000 |
| 24 | Բենզամղիչի փոխարինում | հատ | 2 000 | 2 000 | 2 000 | 2 000 | | 2 000 |
| 25 | Ջրի խողովակի, փողրակի փոխարինում | հատ | 3 000 | 3 000 | 3 000 | 3 000 | 3 000 | 3 000 |
| | 3. Սառեցման և տաքացման | | | | | | | |
| 26 | Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 10 000 | 10 000 | 10 000 | 10 000 | | 10 000 |
| 27 | Ռադիատորի նորոգում | հատ | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 | | 5 000 |
| 28 | Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում | հատ | 3 000 | 3 000 | 3 000 | 3 000 | 3 000 | 3 000 |
| 29 | Վառարանի ռադիատորի փոխարինում, ջրոր | հատ | 15 000 | 15 000 | 15 000 | 15 000 | | 15 000 |
| 30 | Վառարանի ռադիատորի նորոգում | հատ | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 | | 5 000 |
| 31 | Թերմոստատի փոխարինում | հատ | 2 000 | 2 000 | 2 000 | 2 000 | 2 000 | 2 000 |
| 32 | Ջրի մղիչի փոխարինում միջադիրով | հատ | 10 000 | 10 000 | 10 000 | 10 000 | | 10 000 |
| 33 | Ջրի մղիչի միջադիրի փոխարինում | հատ | 6 000 | 6 000 | 6 000 | 6 000 | | 6 000 |
| 34 | Ջրի ռադիատորի վերանորոգում | հատ | 10 000 | 10 000 | 10 000 | 10 000 | | 10 000 |
| 35 | Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 10 000 | 10 000 | 10 000 | 10 000 | 15 000 | 10 000 |
| 36 | Խլարարի խողովակի փոխարինում | հատ | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 | 8 000 | 5 000 |
| | 4. Կցորդում և ՓՏ | | | | | | | |
| 37 | Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 10 000 | 10 000 | 10 000 | 10 000 | | 10 000 |
| 38 | Աշխատանքային կամ գլխ. գլանի նորոգում | հատ | 10 000 | 10 000 | 10 000 | 10 000 | | 10 000 |
| 39 | Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում | հատ | 20 000 | 30 000 | 40 000 | 40 000 | | 60 000 |
| 40 | ՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները | հատ | 30 000 | 30 000 | 30 000 | 30 000 | 65 000 | 30 000 |
| 41 | ՓՏ-ի հավաքածուի փոխարինում | հատ | 10 000 | 10 000 | 10 000 | 10 000 | | 10 000 |
| 42 | ՓՏ-ի հանում և տեղադրում | հատ | 15 000 | 30 000 | 30 000 | 30 000 | 55 000 | 30 000 |
| 43 | ՓՏ-ի քանդում,արատավորում, հավաքում | հատ | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 | | 5 000 |
| 44 | ՓՏ-ի միջանկյալ լիսեռի փոխարինում | հատ | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 | | 5 000 |
| 45 | ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում | հատ | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 | | 5 000 |
| 46 | ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում | հատ | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 | | 5 000 |
| 47 | ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում | հատ | 10 000 | 10 000 | 10 000 | 10 000 | | 10 000 |
| 48 | ՓՏ-ի յուղի փոխարինում | հատ | 1 500 | 1 500 | 1 500 | 1 500 | | 1 500 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ | | | | | | | |
| 49 | Բաշխիչ տուփի հիմնական նորոգում | հատ | 15 000 | 15 000 | 15 000 | 15 000 | | 15 000 |
| 50 | Բաշխիչ տուփի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 10 000 | 10 000 | 10 000 | 10 000 | | 10 000 |
| 51 | Բաշխիչ տուփի քանդում և արատավորում,հավաքում | հատ | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 | | 5 000 |
| 52 | Կարդանային լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 10 000 | 10 000 | 10 000 | 10 000 | | 10 000 |
| 53 | Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում | հատ | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 | | 5 000 |
| 54 | ԲՏ-ի արգելակման թմբուկի փոխարինում | հատ | 10 000 | 10 000 | 10 000 | 10 000 | | 10 000 |
| 55 | ԲՏ-ի արգելակման թմբուկի կոճղակների փոխարինում | 1 կ-տ | 10 000 | 10 000 | 10 000 | 10 000 | | 10 000 |
| 56 | ԲՏ-ի արգելակման թմբուկի կոճղակների կարգավորում | 1 կ-տ | 3 000 | 5 000 | 5 000 | 5 000 | | 5 000 |
| 57 | ԲՏ-ի արգելակման աշ[illegible]անքային գլանի փոխարինում | հատ | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 | | 5 000 |
| | 6. Առջևի և հետևի կամրջակներ | | | | | | | |
| 58 | Առջևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 40 000 | 40 000 | 40 000 | 40 000 | | 40 000 |
| 59 | Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման (ռեդուկտոր) քանդում, արատավորում և հավաքում | հատ | 20 000 | 20 000 | 20 000 | 20 000 | | 20 000 |
| 60 | Կամրջակի յուղի փոխարինում | հատ | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 | | 1 000 |
| 61 | Հետևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 30 000 | 50 000 | 50 000 | 50 000 | | 50 000 |
| 62 | Հետևի կամրջակի լիկատար քանդում, արատավորում և | հատ | 30 000 | 40 000 | 40 000 | 40 000 | | 40 000 |
| 63 | Հետևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում | հատ | 30 000 | 50 000 | 50 000 | 50 000 | | 50 000 |
| | 7. Կախոց | | | | | | | |
| 64 | Առջևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 8 000 | 10 000 | 10 000 | 10 000 | 14 000 | 10 000 |
| 65 | Հետևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 8 000 | 10 000 | 10 000 | 10 000 | 18 000 | 10 000 |
| 66 | Շկվորնու փոխարինում | հատ | 10 000 | 15 000 | 15 000 | 15 000 | | 15 000 |
| 67 | Ռեզբավոյի փոխարինում | հատ | 15 000 | 15 000 | 15 000 | 15 000 | | 15 000 |
| 68 | Առջևի զսպանակի փոխարինում | հատ | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 | | 5 000 |
| 69 | Գնդե հոդակապի փոխարինում | հատ | 4 000 | 4 000 | 4 000 | 4 000 | | 4 000 |
| 70 | Հետևի զսպանակների փոխարինում | հատ | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 | | 5 000 |
| | 8. Ղեկային մեխանիզմ | | | | | | | |
| 71 | Ղեկասյունակի(ՍՏսՏվՍՈ) հիմնական նորոգում, | հատ | 10 000 | 10 000 | 10 000 | 10 000 | | 10 000 |
| 72 | Հիդրոուժեղարարի մղիչի հիմնական նորոգում, ներառյալ աշխատանքները | հատ | 30 000 | 30 000 | 30 000 | 30 000 | | 30 000 |
| | 9. Արգելակային համակարգ | | | | | | | |
| 73 | Վակումային ուժեղարարի փոխարինում | հատ | 10 000 | 10 000 | 10 000 | 10 000 | | 10 000 |
| 74 | Վակումային ուժեղարարի նորոգում | հատ | 10 000 | 10 000 | 10 000 | 10 000 | | 10 000 |
| 75 | Գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 10 000 | 10 000 | 10 000 | 10 000 | | 10 000 |
| 76 | Գլխ. գլանի հիմնական նորոգում, բոլոր աշխատանքների ընդգրկումով | հատ | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 | | 5 000 |
| 77 | Աշխատանքային գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 8 000 | 8 000 | 8 000 | 8 000 | | 8 000 |
| 78 | Առջևի սուպպորտի վերանորոգում | հատ | 10 000 | 10 000 | 10 000 | 10 000 | 10 000 | 10 000 |
| 79 | Արգելակային կոճղակների փոխարինում | 1 կ-տ | 12 000 | 20 000 | 20 000 | 20 000 | 10 000 | 20 000 |
| 80 | Սկավառակային կոճղակների փոխարինում | 1 կ-տ | 3 000 | 3 000 | 3 000 | 3 000 | 20 000 | 3 000 |
| 81 | Թմբուկային կոճղակների փոխարինում | 1 կ-տ | 12 000 | 20 000 | 20 000 | 20 000 | | 20 000 |
| 82 | Առջևի արգելակային սկավառակների հղկում | հատ | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 | 20 000 | 5 000 |
| 83 | Հետևի արգելակային թմբուկի հղկում | հատ | 10 000 | 10 000 | 10 000 | 10 000 | | 10 000 |
| | 10. Էլեկտրասարքավորում | | | | | | | |
| 84 | Գեներատորի հանում,տեղադրում կամ փոխարինում | հատ | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 | | 5 000 |
| 85 | Գեներատորի քանդում և արատավորում, հավաքում | հատ | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 | | 5 000 |
| 86 | Գեներատորի ստատորի փոխարինում | հատ | 2 000 | 2 000 | 2 000 | 2 000 | | 2 000 |
| 87 | Գեներատորի ռոտորի փոխարինում | հատ | 2 000 | 2 000 | 2 000 | 2 000 | | 2 000 |
| 88 | Գեներատորի դիոդային կամրջակի փոխարինում | հատ | 2 000 | 2 000 | 2 000 | 2 000 | | 2 000 |
| 89 | Մեկնարկիչի քանդում և արատավորում, հավաքում | հատ | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 | | 10 000 |
| 90 | Մեկնարկիչի հանում և տեղադրում | | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 | 6 000 | 5 000 |
| 91 | Մեկնարկիչի խարիսխի փոխարինում | հատ | 5 000 | 10 000 | 10 000 | 10 000 | | 20 000 |
| 92 | Մեկնարկիչի բենդեքսի փոխարինում | հատ | 2 000 | 2 000 | 2 000 | 2 000 | | 2 000 |
| 93 | Մեկնարկիչի ավտոմատի փոխարինում | հատ | 2 000 | 2 000 | 2 000 | 2 000 | | 2 000 |
| 94 | Մեկնարկիչիածուխների փոխարինում | 1 կ-տ | 2 000 | 2 000 | 2 000 | 2 000 | | 2 000 |
| 95 | Բռնկման կոճի հանում և տեղադրում | հատ | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 | | 5 000 |
| 96 | Վառոցքի կոճի հանում և տեղադրում | հատ | 3 000 | 3 000 | 3 000 | 3 000 | | 3 000 |
| 97 | Ապակեյվացիչի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 7 000 | 7 000 | 7 000 | 7 000 | | 7 000 |
| 98 | Էլեկտրական տվիչների փոխարինում | հատ | 2 000 | 2 000 | 2 000 | 2 000 | 3 000 | 2 000 |
| 99 | Տրամլյորի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 3 000 | 3 000 | 3 000 | 3 000 | | 3 000 |
| 100 | Տրամլյորի վերանորոգում | հատ | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 | | 5 000 |
| 101 | Տրամլիորի կոնտակտի փոխարինում | հատ | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 | | 1 000 |
| | 12. Այլ ծառայություններ | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 173 | Գլխ. զլան | | 10 000 | 35 000 | 35 000 | 35 000 | | 35 000 |
| 174 | Գլխ. զլանի վերանորոգման կոմպլեկտ | 1 կ-տ | 500 | 5 000 | 5 000 | 5 000 | | 5 000 |
| 175 | Վակուումային ուժեղարար | հատ | 30 000 | 30 000 | 30 000 | 30 000 | | 30 000 |
| 176 | Առջևի արգելակային սկավառակ | հատ | 25 000 | 35 000 | 35 000 | 35 000 | | 25 000 |
| 177 | Հետևի արգելակային թմբուկներ | հատ | 25 000 | 25 000 | 25 000 | 25 000 | | 50 000 |
| | **10. Էլեկտրասարքավորում** | | | | | | | |
| 178 | Գեներատոր | հատ | 25 000 | 25 000 | 25 000 | 25 000 | 110 000 | 25 000 |
| 179 | Գեներատորի դիոդային կամրջակ | հատ | 3 000 | 3 000 | 3 000 | 3 000 | | 3 000 |
| 180 | Գեներատորի ռելե | հատ | 3 000 | 3 000 | 3 000 | 3 000 | | 3 000 |
| 181 | Գեներատորի խարիսխ | հատ | 12 000 | 12 000 | 12 000 | 12 000 | | 12 000 |
| 182 | Գեներատորի փաթույթ | հատ | 8 000 | 8 000 | 8 000 | 8 000 | | 12 000 |
| 183 | Ստարտեր | հատ | 28 000 | 28 000 | 28 000 | 28 000 | 125 000 | 55 000 |
| 184 | Ստարտերի ածուխ | 1 կ-տ | 1 500 | 1 500 | 1 500 | 1 500 | | 3 000 |
| 185 | Մեևարկիչի խարիսխ | հատ | 16 000 | 16 000 | 16 000 | 16 000 | | 30 000 |
| 186 | Բենդեքս | հատ | 3 000 | 3 000 | 3 000 | 3 000 | | 7 000 |
| 187 | Ստարտերի կցորդիչ (ավտոմատ) | հատ | 6 000 | 6 000 | 6 000 | 6 000 | | 18 000 |
| 188 | Ապակեմաքրիչ | հատ | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 | 2 000 | 1 000 |
| 189 | Բռնկման կողպեք | հատ | 3 000 | 3 000 | 3 000 | 3 000 | | 5 000 |
| 190 | Տրամբլիոր հպակով | հատ | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 | | 1 000 |
| 191 | Տրամբլիոր էլեկտրական | հատ | 18 000 | 18 000 | 18 000 | 18 000 | | 18 000 |
| 192 | Ապակելվացիչի շարժիչ | հատ | 8 000 | 8 000 | 8 000 | 8 000 | | 12 000 |
| | **Ընդամենը** | | 2 782 800 | 2 382 900 | 3 484 600 | 3 559 300 | 826 000 | 4 249 800 |
| | **Առավելագույն գների հանրագումար** | | | | | | | 17 285 400 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն ՓԲԸ
ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3
Արդշինբանկ ՓԲԸ, Շենգավիթ մ/6
Հ/Հ 2473600002170010
ՀՎՀՀ 02205028

գլխավոր տնօրեն ____________ Ա. Գրիգորյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

Էլիտ Էսլֆ ՍՊԸ
ք.Երևան, Ա.Ահարոնյան 22փ. բն30
Բանկ___ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570030407870200
ՀՎՀՀ 00465312

տնօրեն____________Մ. Մկրտչյան
(ստորագրություն)

*Հավելված N 2*
*«      »           20  թ. կնքված*
*ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-21/55 ծածկագրով պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | |
|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021-2022թթ-ին, այդ թվում | Ընդամենը |
| 1 | 50111110 | Պազ 32053 | | |
| 2 | 50111110 | Զիլ 431410 | | |
| 3 | 50111110 | Զիլ  MM3 4505- | Վճարումը կկատարվի ծառայությունը մատուցելուց հետո  ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության երկկողմ հաստատման օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում | 100 % |
| 4 | 50111110 | Զիլ 431518 | | |
| 5 | 50111110 | Հունդաի քաունթի | | |
| 6 | 50111110 | Բելառուս էքսկավատոր | | |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն ՓԲԸ
ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3
Արդշինբանկ ՓԲԸ, Շենգավիթ մ/ճ
Հ/Հ 2473600002170010
ՀՎՀՀ 02205028

գլխավոր տնօրեն ----------------- Ա. Գրիգորյան
/ստորագրություն/

Կ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

Էլիտ Էսվե ՍՊԸ
ք.Երևան, Ա.Անարոնյան 22փ. բն30
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ  1570030407870200
ՀՎՀՀ  00465342

տնօրեն------------------------Ս. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

*Հավելված 3*
*«      »            20 թ. կնքված*
*ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-21/55 ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ____________ |
| հհ ______________________ | հհ______________________ |
| հվհհ ____________________ | հվհհ____________________ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«    » «            » 20   թ.*

Պայմանագրի /այսուհետ` Պայմանագիր/ անվանումը`
_______________________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը` «____» «___________________» 20 թ.
Պայմանագրի համարը` __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը` հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «      »   «                    »  20      թ. դուրս գրված N ___   հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները`

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«    »    20  թ. կնքված*
*ԵՔԷԿ-ԳՀԾՁԲ-21/55 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____________-ի
Պատվիրատուի անունը                    Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20    թ. ______________________ -ին կնքված N __________________
պայմանագրի կնքման ամսաթիվը                    պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20  թ. ___________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն